Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ***ՀՀ վարչապետի 02.02.2026թ-ի 80-Ա որոշում***

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ ԱՍՀ նախարար՝ Արսեն Թորոսյան

4. Գործուղման վայրը-***Սաուդյան Արաբիայի Թագավորություն՝ Ռիյադ***

5. Գործուղման ժամկետները ***25.01.2026թ-27.01.2026թ.***

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝* ***ճանապարհածախս, գիշերավարձ****, օրապահիկ և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ***ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը***
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		***Արսեն Թորոսյան***	***Ընդամենը (հազ. դրամ)***
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	-	-
	Ավիատոմսի և ավիատոմսի ամրագրման արժեքը (դրամ)	-	-
Գիշերա-վարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (ԱՄՆ դոլար)	131	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	49,653	-
	Օրերի քանակը	3	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	***148,959***	***148,959***
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			***148,959***

****օրապահիկի հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի «02» «փետրվարի» 2026 թվականի 1 դոլարին համարժեք 379.03 ՀՀ դրամի չափը***

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՏԱԿ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

2/2/2026

X

ԱՐՏԱԿ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

Signed by: MANGASARYAN ARTAK 2707770051

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Արսեն Թորոսյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ), 2026 թվականի հունվարի 25-27-ը

3. **Հրավիրող կողմը.**
   Սաուդյան Արաբիայի Թագավորության մարդկային ռեսուրսների և սոցիալական զարգացման հարցերի նախարար Ահմադ բին Սուլեյման Ալ-Ռաջհի

4. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Աշխատաշուկայի երրորդ գլոբալ համաժողովին

5. **Քննարկված թեմաները.**
   Աշխատաշուկայի գլոբալ փոփոխություններ և նոր աշխատատեղերի ստեղծում, աշխատողների իրավունքների պաշտպանություն, ստվերային տնտեսության և ոչ ֆորմալ զբաղվածության մարտահրավերներ, կայուն և դիմակայուն աշխատաշուկաների ձևավորում, աշխատաշուկայի վրա արհեստական բանականության ազդեցություն:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Աշխատաշուկայի երրորդ գլոբալ համաժողովին մասնակցում էին տարբեր երկրների նախարարներ, քաղաքականություն մշակողներ, միջազգային և տարածաշրջանային կառույցների ղեկավարներ, համաշխարհային փորձագետներ, գիտական ոլորտի ներկայացուցիչներ և պաշտոնատար այլ անձինք:
   Համաժողովի շրջանակում մասնակցել եմ նախարարական կլոր սեղան քննարկմանը, որտեղ հանդես եմ եկել ելույթով:
   Անդրադառնալով աշխատանքի և զբաղվածության ոլորտում սահմանված գերակայություններին՝ ելույթում մասնավորապես նշել եմ, որ Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվում է իրականացնել ավելի քան 100 միջոցառում, որոնք առաջիկա տարիներին միտված են լինելու մրցունակ և զբաղունակ աշխատուժի ձևավորմանն ու զբաղվածության աճի ապահովմանը՝ բարձր արտադրողականությամբ աշխատատեղերի ընդլայնման միջոցով: Ռազմավարությամբ առանձնացված

թիրախային խմբերից բացի կարևորել եմ նաև հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ավագ սերնդի ներկայացուցիչների տնտեսական ակտիվացմանն ուղղված գործնական քայլերի իրականացումը: Ընդգծել եմ նաև, որ ՀՀ կառավարությունը որդեգրել է աշխատուժի արտաքին տեղաշարժը երկկողմ համաձայնագրերի միջոցով կարգավորելու քաղաքականություն, որը հնարավորություն է տալիս ապահովել աշխատողների իրավունքների պաշտպանությունն ու սոցիալական երաշխիքները:

Հանդիպումներ եմ ունեցել Ֆիլիպինների Հանրապետության, Սերբիայի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտը համակարգող նախարարների հետ.

✓ Սերբիայի Հանրապետության աշխատանքի, զբաղվածության և սոցիալական հարցերի նախարար Միլիցա Ջուրջևիչ Ստամենկովսկու հետ հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև ժողովրդագրության ոլորտում փորձի փոխանակման հեռանկարները. դիտարկվել է ոլորտային հուշագրի ստորագրման հնարավորությունը:

✓ Լատվիայի Հանրապետության սոցիալական ապահովության նախարար Ռեյնիս Ուզուլնիեկսի հետ հանդիպման շրջանակում քննարկվել են Լատվիայի աջակցությամբ ՀՀ աշխատանքային օրենսդրությունը ԵՄ ստանդարտներին համապատասխանեցնելու գործընթացին առնչվող մի շարք հարցեր: Ընդգծվել է փոխադարձ այցելությունների միջոցով փորձի փոխանակման և մասնագիտական կարողությունների զարգացման կարևորությունը:

✓ Եգիպտոսի Արաբական Հանրապետության աշխատանքի նախարար Մոհամեդ Գոբրանի հետ հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել «ՀՀ կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև ՀՀ տարածքում Եգիպտոսի Արաբական Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» հուշագրի նախագծին, ինչպես նաև ոլորտային ընդհանուր համագործակցությանն առնչվող մի շարք հարցերի:

Ներկայացրել եմ աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմները, ինչպես նաև ՀՀ աշխատաշուկա մուտքի ընթացակարգերը:

✓ Ֆիլիպինների Հանրապետության աշխատանքային միգրանտների հարցերով դեպարտամենտի քարտուղար Հանս Լեոյի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են աշխատանքային միգրացիայի և աշխատանքային իրավունքի պաշտպանությանն առնչվող մի շարք հարցեր:

Ներկայացրել եմ Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագրով սահմանված առաջնահերթությունները, մանրամասնել այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներն ու նախատեսվող թիրախային միջոցառումները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
   Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**